ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"05" դեկտեմբերի 2025թ. N 838-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում գրանցված որոշ օդանավ շահագործողներին կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրողներ նշանակելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 25.10.2024 թվականի N 2559-Ա հրամանը, «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի մարտի 25-ի թիվ 125 .25-03/25, 2025 թվականի ապրիլի 28-ի թիվ 179.28-04/25 գրությունները և ՀՀ էկոնոմիկայի նախարարության 09.04.2025 թվականի թիվ 7418-2025 եզրակացությունը:

ՊԱՐԶՎԵՑ

Ընկերության կողմից ներկայացված գրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Երևան-Բարսելոնա, Երևան-Նիս և Երևան-Քիշնև ուղղությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի չեն համարվում չսպասարկված ուղղություններ, մասնավորապես՝ չսպասարկված ուղղություններ են համարվում այն օդանավակայանները,

որտեղ ցանկացած ավիաընկերության կողմից իրականացված չվերթերի քանակը միաժամանակ IATA ամառային ժամանակահատվածում (մարտի վերջին կիրակի օրվանից ներառյալ հոկտեմբերի վերջին շաբաթ օրը) չի գերազանցում 14-ը և IATA ձմեռային ժամանակահատվածում՝ (հոկտեմբերի վերջին կիրակի օրվանից ներառյալ մարտի վերջին շաբաթ օրը) 10-ը, իսկ Երևան-Լառնակա և Երևան-Թել Ավիվ ուղղությունների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն 36 ամսով տրված արտոնության ժամկետը ևս 24 ամսով երկարաձգել: Հաշվի առնելով վերոգրյալը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի արտոնությունը երկարաձգել հետևյալ ուղղություններով.

1) «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերություն (Երևան-Լառնակա-Երևան 22.06.2025թ.-ից 24 ամսով, Երևան-Թել Ավիվ-Երևան 16.12.2025թ.-ից 24 ամսով):

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

5/5/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան